# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 102-Ա**

**« 17 » ԱՊՐԻԼԻ 2025Թ.**

**ԷԹԵՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՂԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N259-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և հիմք ընդունելով Էթերի Ներսիսյանի դիմումը՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Էթերի Մայիսի Ներսիսյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղդեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում, նրա նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով: Աշխատանքը սկսել 2025 թվականի ապրիլի 18-ից:
2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղդեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 18-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**Ք.Եղեգնաձոր**

**Հավելված**
**ՀՀ Վայոց ձորի մարզպետի**
**2025թ ապրիլի 17 -ի**
**N 102-Ա որոշման**

## «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՂԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Վահան Աբրահամյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական |

Անդամներ՝

| | |
|---|---|
| Գվիտոն Դավթյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պաշտոնում փորձագետ |
| Հուսիկ Հարությունյան | ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ |